կնքել անկեղծ հաշտություն: Ռուս ժողովրդի հետ մենք չենք եղել թշնամի և չենք ուզում լինել: Նա պէտք է հաշտի մեր անկախ գոյութեան հետ, իսկ եթէ նա չարժի մեր վրա անկախությունը ոչնչացնելու նպատակով՝ մենք նրան դէնքով կը դիմաւորենք: Մեզ պէտք է պատուաւոր հաշտություն բոլորի հետ:

Հայաստանը ստեղծել է հայ գիւղացիությունը և նրա մէջ ապրողները գիւղացիներ ու բանուորներ են. ժողովրդական կառավարությունը պէտք է ստեղծէ ընդհանուր կամք:

Մի մեծ պարտականություն ևս ունի կառավարությունը, պայքարել տնտեսական ճգնաժամի դէմ չեզոքացնելով չահագործումը: Հ. Յ. Դաշնակցության Ֆրակցիան վստահություն է յայտնում այս կառավարությանը:

Պատգամաւոր Լ. Թումանեան. — Մեր վերաբերմունքը այս կառավարության հանդէպ բղխում է այն բանից, որ մենք աւել ենք նրան մեր երկու ներկայացուցիչները: Կառավարության դեկլարացիան ընդհանուր գծերով մեր Ֆրակցիային բաւարարում է:

Մենք կուզէինք իմանալ, թէ ի՞նչ նոր գծեր է մտցնում այս կառավարությունը եղած քաղաքականության մէջ: Մեծ խոստումներ չի տալիս մեզ այս կառավարությունը. մենք ցանկանում ենք, որ այդ փոքր խոստումները լինէին անկեղծ:

Սոցիալիստ-Յեղափոխականների Ֆրակցիան այս կառավարության խոստանում է իր աջակցությունը:

Նախագահը կարդում է Հ.Յ.Դաշնակցության Ֆրակցիայի առաջարկած հետևեալ բանաձևը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի դեկլարացիան՝ հաւանություն է տալիս»:

Ուրիշ բանաձևեր չկան: Բանաձևը քվէարկում է և ստանում կողմ 30 ձայն, դէմ՝ ոչ մի և ձեռնպահ՝ 2 ձայն:

Ժամը 9-ից 10 րոպէ անց նիստը յայտարարում է փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏԱԾ ՕՐԷՆՔՆԵՐԸ

1918—1919

Հայաստանի խորհուրդը իր գոյութեան ընթացքում, 1918թ. օգոստոս 1ից մինչև 1919թ. յունիս 5, հաստատել է 116 օրէնք, որոնց մեծագոյն մասը վերաբերում է օրայ գործնական կեանքին՝ ելևմտական խնդիր, պաշտօնէութեան ռոճիկ, սով ու համաճարակ, որբ ու գաղթական, կառավարական հիմնարկութիւնների կազմակերպում կամ բարեփոխում, հին իշխանությունից մնացած օրէնքների ու հիմնարկութիւնների հաշվեյարդար և այլն և այլն: Ընդհանուր բաղաքականությունը բնորոշող կամ ընկերային, տնտեսական ու մշակութային ընդհանուր արժէք ունեցող օրէնքներ, համեմատաբար, քիչ կան: Հայաստանի խորհրդի ընդունած օրէնքներն իսկ ցոյց են տալիս, որ նա, աւելի շուտ, ապրել է ընթացիկ կեանքի չարիքներով, տարուել է օրը օրին ծնունդ առնող խնդիրներով և ժամանակ ու հնարաւորություն չի ունեցել զբաղուելու պետական հիմնական աշխատանքով:

Հայաստանի խորհրդի հաստատած օրէնքները հրատարակված են առանձին հատորով*): Այստեղ այդ հատորից առաջ ենք բերում, ժամանա-

*) Հայաստանի Խորհրդի Հաստատած Օրէնքները, 1918—1919թ., մաս 1, Երևան, 1919թ.